


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)

	2003թ. հունվար-նոյեմբեր		Ընդհանուրի նկատմամբ, %	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2002թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %	2003թ. հունվար-նոյեմբեր	2002թ. հունվար-նոյեմբեր
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	771976.8	112.7	100.0	100.0
այդ թվում				
մանրածախ ապրանքաշրջանառություն	589921.0	114.4	76.4	75.0
բնակչությանը մատուցված ծառայություններ	182055.8	108.8	23.6	25.0

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները
(ընդհանուրի նկատմամբ %)



2003թ. հունվար-նոյեմբերին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 12.7% աճ՝ 2002թ. հունվար-նոյեմբերի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով: Ընդ որում, դրանում 1.4 տոկոսային կետով ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը:

Մանրածախ առևտուր


2003թ. հունվար-նոյեմբերին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 589921.0 մլն. դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 14.4%-ով: 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 96.7%:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2003թ. հունվար-նոյեմբերին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը ընդհանուրի նկատմամբ, %
Ընդամենը	589921.0	100.0
<i>այդ թվում՝</i>		
խանութներ	330873.5	56.1
հանրային սնունդ	6169.1	1.1
սպառողական ապրանքների շուկաներ	173024.3	29.3
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	22111.4	3.7
կրպակներ	57742.7	9.8

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2003թ. հունվար-նոյեմբերին

(ընդհանուրի նկատմամբ %)



2003թ. հունվար-նոյեմբերին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 95.2% (561640.5 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2003թ. հունվար-նոյեմբերին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 173024.3 մլն. դրամ:


ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի, 2003թ. հունվար-նոյեմբերին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ %-ով ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	158684.1	11.7	88.3
Արագածոտն	221.7	-	100.0
Արարատ	914.8	8.9	91.1
Արմավիր	2582.0	27.0	73.0
Գեղարքունիք	1305.2	27.7	72.3
Լոռի	3585.7	53.8	46.2
Կոտայք	2206.8	16.4	83.6
Շիրակ	1134.2	-	100.0
Սյունիք	532.9	11.9	88.1
Վայոց ձոր	166.7	-	100.0
Տավուշ	1690.2	33.2	66.8
Ընդամենը ՀՀ	173024.3	13.1	86.9

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2003թ. հունվար-նոյեմբերին, կազմել է 86.9%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալն ըստ ՀՀ մարզերի

(ընդհանուրի նկատմամբ %)



2003թ. հունվար-նոյեմբերին 2002թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 1.3 տոկոսային կետով:

2003թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 42059.2 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 48 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-նոյեմբերին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 3.7% կամ 22111.4¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-նոյեմբերին»

Բնակչությանը մատուցված ծառայություններ


2003թ. հունվար-նոյեմբերին հանրապետությունում, ըստ ծառայություններ մատուցող կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 182055.8 մլն.դրամ, որը 2002թ. հունվար-նոյեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 8.8%-ով:

Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 2926.2 մլն. դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 36.0%-ով:

2003թ. հունվար-նոյեմբերին 2002թ. հունվար-նոյեմբերի համեմատ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.9% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (9.3%), փոստային և հեռահաղորդակցության (7.9%), կրթության (2.1%), մշակույթի (7.1%),գրոսաշրջության և էքսկուրսային (0.3%), առողջարանների և հանգստյան տների (1.2%) ծառայությունների սակագների հավելաճով: Կենցաղային, իրավական և բանկային ծառայությունների սակագները նվազել են համապատասխանաբար 0.2 և 0.1%-ով:

Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը 2003թ. հունվար-նոյեմբերին

(ընդամենի նկատմամբ %)



2003թ. հունվար-նոյեմբերին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել մարդատար տրանսպորտի (57250.6մլն.դրամ) և բնակարանային-կոմունալ տնտեսության (46719.0մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 31.4 և 25.7 %:

2003թ. հունվար-նոյեմբերին խաղատների ծառայությունների ծավալը կազմել է 1637.6մլն.դրամ կամ բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 0.9%-ը: Բնակչությանը մատուցված համակարգչային ծառայությունների ծավալը կազմել է 159.7 մլն. դրամ: